## ՄՏԱԾՈՒԹԻՒՆ.

Սիրել և խաբել, և կեղծաւորել,
Միշտ անարգ գործել և ստախօսել,
Վաղուան օր նոյնպէս, ինչպէս որ այսօր,—
Որտեղ այժմ գտնեմ այս կեանքի համար։
Նպատակ մութ է. իւրաքանչիւր օր
Մի է և նոյն է և է նոյնպէս չար։
Ոհ, կեանք անիծված, զզուելի որքան,—
Երբ երբ կանչէ քեզ մթին գերեզման․․

ԻՇԽԱՆ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ.

## ՆԱՄԱԿ ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ.

Դարեւոր փորձերով ապացուցված անհակառակելի մի ճշմարտութիւն է, որ մի ազգ կրթվելու, զարգանալու, ճշմարտապէս լուսաւորվելու համար երկու միջոց ունի. ուսումնարան եւ պարբերական հրատարակութիւններ, (լրագիր, ամսագիր)։ Առաջինը մանուկներին, վերջինները հասուն մարդիկների համար։ Այս հնամի ճշմարտութիւնը, որ ասիական ազգերէ ամենք, իրանց կրօնի շնորհավ տակաւին կհալածեն, հայ ազգը սկզբից ճանաչել, յարգել եւ սիրել է։ Ճշմարիտ է, Հայաստանի աշխարհագրական դիրքը մեծապէս վնասեց հայկական ազգի ընդհանրական զարգացմանը, ճշմարիտ է, հայ ժողովուրդը արեւական ցեղերի գրեթէ հանապազօրեայ տառապանքների եւ արշաւանքի առիթով շատ յետ մնաց ընդհանուր ազգային լուսաւորութեան շաւղէն, սակայն ճակատագրի այս հարուածը չկարողացաւ խափել Հայի բնածին յատկութիւնները ի չիք դարձնել։ Ասիայի ազգերի մէջ, որ մինչեւ այսօր յայտնեալ կրօնների մէջ ամենէն գերազանց, մարդկութեան ընդհանրութեան ճշմարիտ նպատակ, նորա խրատների հաւատարութիւն, ազատութիւն, ընկերական միութիւն շնորհօղ, քրիստոնէական կրօնէն կարողացաւ շահվիլ, այդ միակ հայ ազգն էր։ Այս ազգը կարծես յատկապէս ընտրված էր եւ է մարդկային խրատունքի հաւատարութիւն չխոստովանող կրօններէ ժառանգաբար հալածվելու եւ տանջվելու, եւ սորանով ժամանակով լուսաւորութեան եւ քրիստոնէական կրօնի կարապետ լինելու Ասիայի մէջ։

Այս եւ սորա նման յօյսեր կապվին հայ ազգի վերայ նայելով նորա բնածին հակմանը եւ սիրոյն դէպ ի կրթութիւնը եւ դէպ ի ընդհանուր մարդկային զարգացումը։ Այս սէրը եւ հակումը տակաւ առ տակաւ արծարծվելով աշխարհի ամենայն անկիւնները ցրուած հայ ժողովրդի մէջ եւ ընդհանրանալու շաւղին մէջ մանելով ներկայ Վեհափառ, ժողովրդասէր Կաթուղիկոսի Աթոռակալութեան օրով ստացաւ եւ կատանոյ իւր կանոնաւոր ընթացքը։ Վկայ են հայաբնակ քաղաքների եւ գիւղերի մէջ ներկայումս փայլօղ արական եւ օրիորդական դպրոցները, ժամանակակից պիտոյքների եւ պահանջման եթէ ոչ լիամասն յարմար եւ համընթաց, գէթ հետեւօղ եւ ճիգն թափօղ նորան հասնելու։

Եւ եթէ մի կողմէն այս բարի եւ փրկաւէտ խորհմունքի եւ շարժմունքի մի քանի օտարատէր, չարամիտ եւ սնափառ անձների դիշերադէմ տքնութիւնները մեծապէս վնասելու են կրօնին եւ կվնասեն, ազգային ուսումնարանների գոյութիւնը ապարդիւն եւ ումպէտ ցուցանել ջանալով, միւս կողմէն բարեմիտ, խոհական, ազգային ընդհանուր կրթութեան եւ զարգացման ճշմարիտ համակրող սրտեր արիաջան տքնութեամբ ոչինչ հոգ, փոյթ, քաջալերութիւն եւ զոհողութիւն չեն խնայեր նոցա թիւը շատացնելու եւ նոցա ժամանակի պահանջման ու պիտոյքի յարմարեցնելով ու կանոնաւոր ուղղութիւն տալով ապացուցանելու նոցա գոյութեան անհրաժեշտ կարեւորութիւնը:

Եթէ մեր լուսաւորվելու շարժող ազգի մէջ շպարեալ, գլխակաւորված, փառքուս, ազգացեղ մարդուկներ ունինք, գաղտագողի հնարներով եւ խորամանկութեամբ ազգը տապալելու, իւր եկեղեցիէն խորթացնելու եւ նորանով նորա դարեւոր գոյութեան հիմքը խախտելու գիշերաջան ճգնողներ, ունինք նոյնպէս, գոհութիւն Աստուծոյ, ճշմարիտ ազգասէրներ, անձնազոհ սրտեր, ազգի գոյութեան յարատեւութիւնը միակ ազգային եկեղեցու եւ դպրոցների մէջ տեսնողներ:

Դպրոցներ, ազգային դպրոցներ պէտք են մեզ, ահա այս կաղաղակէ այսօր հայ հասարակութեան բանիմաց եւ ընտիր մասը: Եւ կխնդայ, բարէ՜, իւր ցանկութիւնների եւ փափագներին ամենայն սիրով եւ գգուանքով ողջակոյթ պաշտպան եւ ջատագով գտնելով իւր եկեղեցու այսօրուան ընդհանուր գլուխ, Վեհափառ եւ մեծագործ Կաթուղիկոսն Գէորգ Դ:

Հարկ կայ մի՞թէ այս Ազգասէր Հայրապետի ազգային երկսեռ ուսումնարանների գոյութեան, նոցա կանոնաւոր ուղղութեան, յարատեւութեան եւ օգտաւէտութեան համար տածած հոգսը եւ ջանքը խօսքերով ապացուցանելու: Հարկ կա՞յ մի առ մի թուել այն ազգասէր, ականաւոր անձների անունները, որոնք սորա օրինակէն եւ յորդորներէն խրախուսված, հայ մանուկների զարգացման նպատակ չդանդաղեցան, զոհելով կարողութեան չափով նշանաւոր գումարներ բացված եւ բացվելի ազգային ուսումնարանների համար: Մենք հարկ չենք տեսներ ազգային այս բարերարների անունները եւ գործերը թուել, մինչդեռ իրողութիւնը ինքն յայտնապէս կաղաղակէ:

Բայց հարկ կհամարինք փութալ բերկրութեամբ սրտի յայտնել ի գիտութիւն ազգակիցներիս, որ մեր ազգային բարերարների վեհ անունների վերայ այս օրերս պիտի աւելանայ մի ուրիշ անուն, որի բարեգործութեան եղանակը մինչեւ այժմ եղածներէն կարի տարբեր, ընդարձակ, նպատակայարմար եւ բազմակողմանի պիտի լինի, ինչպէս որ ինքը, բարեգործութեան պատրաստվող պարոնը յայտնեց մեզ մի քանի պատուելի անձների ներկայութեամբ:

Այս պարոնը մի հարուստ ամուրի

երիտասարդ է, հաճի Կարապետ Շահնազարեան, բնիկ Հայաստանի զաւակ, 40 թուականին Ակոռիի գետնաշարժին զոհ գնացող թշուառների սակաւաթիւ մնացորդներէն մին: Սորա առնելի բարեգործութեան ծրագիրը այս է:

Նախ Խօշաժանքը, որ այժմեան թիւրք — ռուսական պատերազմի շընորհիւ Ռուսների հզօր եւ ապահով պաշտպանութեան ներքոյ կգտնուի, այդ մենարանը, մեր նախնի մի քանի թագաւորների յաւիտենական հանգստեան վայրը, այդ այժմ խաւար անշուք եւ նորոգութեան կարօտ վանքը նորոգելով կառուցանել նորա պարսպի մէջ մի ազգային դպրոց ընդ անմիջական իշխանութեամբ Նորին Վեհ. Օծութեան ընդհանուր Հայոց Կաթուղիկոսի: Թէեւ մեր համոզմունքը այն է, որ քանի թէ ազգային ուսումնարանների թիւը հետզհետէ շատացնելով եւ սորանով ազգային նիւթական եւ բարոյական ույժը բաժանելով, ունենալ այս եւ այն անկիւնը ուսումնարան նիւթապէս եւ բարոյապէս բազմակարօտ, տկար, թոյլ, անապահով, խարխուլ հիման վերայ յենած, աւելի փըրկաւէտ եւ նպաստաւոր է եղածների անտեսական եւ ուսումնական դրութիւնը բարւոքելու հոգ եւ խնամք տանել, սակայն պ. Շահնազարեանի բարեգործութեան ընդարձակ ծրագիրը արժէ բառ մեղ առանձին խմն գոյութեան եւ անունին:

Երկրորդ — կառուցանել վանքի պարսպի մէջ բազմաթիւ սենեակներ թէ ուխտաւորների եւ թէ այն հարուստ անձների համար, որոնք կմտածէին թէ ամառը հովասուն, բնութեան գեղեցկութեամբ զարդարված վայրը կարող էին երկու կամ երեք ամիս հանգիստ կեանք վարել: Վանքը իւր յատուկ կրպակները ունենալով հնարաւորութիւն պիտի տայ իւր այցելուներին ոչ միայն առօրեայ կենսական պիտոյքների նեղութիւն չքաշել, այլ եւ տասն եւ հինգ օր բնակարանի համար վճար պիտի չտան ամառանոց եկողները, այլ եւ նորա նոյնքան ժամանակ եւս վանքէն ձրի պիտի ստանան կաթն, պանիր եւ մածուն:

Երրորդ — ստանալով Հոգեւոր Բարձրագոյն Իշխանութենէն հաւատարմագիր վանքին պատկանեալ հողերն պահպանելու եւ եթէ խլված տեղեր կան, նոցա դատաստանական կարգով յետս պահանջելու, տալ նոցա շրջակայ բնակիչներին շահվելու, ստանալով նոցանից որոշեալ հասը:

Չորրորդ — վանքը պիտի ունենայ իւր յատուկ արօտատեղին եւ վարելահողը, իւր սեփհական ընտանի կենդանիները, ձի, կով, եզն, գոմէշ, ոչխար եւն:

Այս ծրագրի 5, 6, 7 եւ 8 յօդուածները մէջ բերել զանց կառնենք, որոնց կատարումը ապագայ հանգամանքներէն կախումն պիտի ունենայ: Այն է առաջին. ձիերի, կովերի, ոչխարների ընտիր տեսակներ ձեռք բերել եւ նոցա եւրոպական ազգերի սնուցածի պէս սնուցանելով եւ դարմանելով, հնարաւորութիւն ունենալ ոչ միայն վանքի համար ընտանի կենդանիների ընտիր

տեսակներ որոշել, այլ եւ նոյն տեսակներէն վաճառելով արդիւնաբեր շահաստացութիւն ձեռք բերել: 2. պանրագործութեան, իւղ շինելու արհեստանոցներ կառուցանել նման եւրոպականին եւն. եւն:

Այս ամենի ընդհանուր կառավարութեան հոգսը եւ փոյթը յանձն առի առնել ինքն այս բարեգործութիւնների հիմնադիրն իւր կեանքի մնացորդը (նա տակաւին երիտասարդ տիկին առոյգ հասակի մէջ կգտնուի) նուիրելով իւր ծրագրած բարեգործութիւններին հիմնաւոր եւ հաստատուն մի ուղղութիւն տալու, եւ նորան ապագայի որ եւ իցէ պատահմունքէն զերծ մնալու:

Այս մասին յիշեալ երիտասարդ պարոնը մտադիր է շուտով խնդրամատոյց լինել Նորին Վեհ Օծութեան, յայտնելով համապատասխանորէն իւր խորհած եւ մտածած բոլոր նախագիծը:

ՅՈՎՀԱՆՆԷՍ Թ. ՔԱՋԱԶՆՈՒՆԻ.

Ախալքալաք:

## ՍԷՆԷԿԱՅԻՑ.

Երիացիր, տղաներին յարմար է ահ,
Իսկ դու քաջ ես, գնա տանջանքի, գընա
վտանգ,
Երիացիր, թող ապագան ցիցը քեզ տայ,
Բայց փառք պատիւ մեռնելու չին ցցի
վերայ:
Երիացիր, տանջանքի դէմ կդողայ բա-
տրուկ, —
Ճակատագրի հակառակորդ ես դու կը-
րուկ:
Երիացիր, ճակատագիր է թշնամին
Վեհ անձներին, ահա և քեզ մատնից
մահին:
Երիացիր, մահի կգնաս, սիրելով մահ,
Բայց սորանով դու փառաւոր կլինես ան-
մահ:

## ՀԱՅԱԶՆ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ՀԵՏՔԵՐ ԵՒ ԻՐԱՆՑ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ ԿԱՄԷՆԷՑ — ՓՕԴՕԼՍԿՈՒՄ.

Ներկայ տեղեկութիւններս կհաղորդեմ ըստ յիշողութեանս առանց գրաւոր աղբիւրներ ունենալու առ ձեռն, ուստի ներելու է ինձ այսպիսի դէպքում տեղեկութիւններիս ընական համառօտութիւնը եւ թերութիւնը: Աշխատելու եմ առաջին յարմար միջոցում լրացնել տեղեկութիւններս կամ հասցնել խմբագրութեանդ արդէն մշակված եւ հրատարակված շարադրութիւններ այս նիւթիս վերաբերմամբ: